Արձանագրություն N 3

ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԽԾՁԲ-25/8 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

11 սեպտեմբերի 2025թ.
ժամը՝ 16^{00}

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա.Հովհաննիսյանը
անդամներ՝ Ս.Գասպարյանը, Լ.Սարգսյանը
քարտուղար՝ Ս.Մկրտչյանը

I. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփման մասին

(Ա.Հովհաննիսյան)

1.1 ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԽԾՁԲ-25/8 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի բացման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ «ՄԱԳ Քոնթրոլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում էին ՀՀ ՆԳՆ Կ ԳՀԽԾՁԲ-25/8 ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որոշակի փաստաթղթեր, մասնավորապես՝

- Նմանատիպ աշխատանքների պայմանագրերի, հանձնման-ընդունման ակտերի, արձանագրությունների, հաշիվ ապրանքագրերի պատճենները
- աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները, անձնագրեր և որակավորումը հավաստող փաստաթղթեր Հավելված 1.4
- Աշխատանքների կատարման համար պահանջված լիցենզիաները /ներդիրները/:

2025թ սեպտեմբերի 09-ի թիվ 2 արձանագրությամբ նշված փաստաթղթերի ապահովումը պահանջվեց «ՄԱԳ Քոնթրոլ» ՍՊԸ-ից, որոնք ներկայացվեցին նշված ժամանակաընթացքում:

1.2 Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին և արձանագրեց, որ

ա/ Մասնակցի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Մասնակցի անվանումը	Տեխնիկական առաջարկ	Գնային առաջարկ	Գնահատման արդյունքում ստացված միավոր
«ՄԱԳ Քոնթրոլ» ՍՊԸ	60	40	100

Ընտրված մասնակիցը որոշվում է առաջարկած գնին, աշխատանքային փորձին, աշխատակազմին, ծառայության մատուցման առաջարկվող կարգին կամ հրավերով սահմանված ոչ գնային այլ պայմանին հրավերով սահմանված կարգով տրված գործակիցների հանրագումարներից ամենաբարձրին նախապատվություն տալու սկզբունքով

1.3 Հանձնաժողովն որոշեց.

ա/ «ՄԱԳ Քոնթրոլ» ՍՊԸ-ն հաղթող մասնակից ճանաչվեց 1-ին և 2-րդ չափաբաժինների համար

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

I I. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(Ա.Հովհաննիսյան)

2. Հանձնաժողովն որոշեց ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով՝ անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ առկա է միայն մեկ մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Ա.Հովհաննիսյան

անդամներ՝ _____ Ս.Գասպարյան

_____ Լ. Սարգսյան

քարտուղար՝ _____ Ս.Մկրտչյան